

լոյսը, օրուան ամէն մէկ վայրկեանին . իր աշխատանոցը բաց կապոյտին տակ է, հոն ուր ծովը կը հաղորդուի երկնքին հետ, և հոն միայն մարդ կը զգայ տիեզերքի անհունութիւնը : Ինքը լիացած է այդ կեանքով, նոյնացած է բնութեան հետ և լոյսի հրեղէն թեւերով իւր հզօր երեւա-կայութիւնը կը վերացնէ, կը հոգիացնէ թանձր նւթը իր անսեթեւեթ և խորունկ վիճակին մէջ : Անոր ծովափնորուն վրայ դուր չէք տեսներ չարաճճի աղմուկներով բազմութիւններ, ուժեղ գոյներով ասուեակ-ներ և անոնց մէջ արեւայեղց ու լուսաթափանց մարմիններ : Գոյներու ամենէն նուրբ խառնուրդը կը գործածէ, թեթեւ դեղինի, վարդագոյնի, լոյսի բազազրութիւն մը տիրական է գրեթէ բոլոր նկարներուն մէջ . և այս քանի մը գոյներով նա քեզի կը ներկայացնէ ծովափը բազմազանայլա-կերպութիւններով :



Տօթածամ յետ միջօրէի (մասնակի) — Կ. Աղամեան

Աղամեան՝ մասը ամբողջութեան տեղ առնելով մէկ երկու դէմքերով կը ներկա-յացնէ նաեւ ծովեզերքի կեանքը . այն ՅՈՒՋՈՒՈՂ ՄՈՎԸ ուր աղջնակը կը ցոլա-նայ տաք ու խոնաւ գոյներու մէջ . իր շնորհալի փափկութեամբ, պատահական ներկայացուցիչն է հազարաւոր աղջնակ-ներու, որոնց դոյլն ու թին ծովեզերքի միակ հաճելի խաղակիցներն են : Ինչպէս սա ՏՕԹԱԺԱՄԸ ՅԵՏ ՄԻՋՕՐԷԻ մանկական շնորհն ու մայրական գորովը լոյսի եւ կեանքի թարմ քնարերգութիւն մ'է բո-լոր բաղնեւորներու համար : Գրեթէ ամէն ծովափնայ նկարի մէջ ընդարձակութիւ-նը սահմանաւորող դէմք մը կը ցուցա-դրուի որուն դիրքը կամ կեցուածքը կը նոյնանայ նկարչին հոգեբանական վայր-

կենին հետ, կերպով մը նիւթականացնելով անշօշափելի, աներեւոյթ յուզումը որ կը զգայ բնութեան հանդէպ : Այդ նոյն ըզ-գացումը մեզի ալ դիւրաւ կը հաղորդուի և նկարիչ, զիտող և նկար կը լուծուին բնութեան մէջ :

Լոյսի և ծովափի պաշտամունքը հեղի-նակն ստացած է իր ծննդավայրէն և Վե-նետիկէն . մարդու մանկութիւնը այնպիսի ծածուկ և զօրաւոր ուժ մը կը զնէ մեր մէջ, որ ուշ կամ կանուխ կը յայտնուի ժառանգական հիւանդութեան մը պէս . տարիներ վերջ կը սիրենք, կ'օրինա-կենք ինչ որ տղա-յութեան տեսած և սիրած ենք . այդ ազդեցութեան տակ կ'անցնի մեր կեան-քը, այսպէս տղա-յութեան և հասու-նութեան սէրերը կու գան և իրարու կը հանդիպին . կեանքը կեանքին կրկնու-թիւնն է :

Աղամեան նախա-սիրութիւն կը ցու-ցնէ թիւէփոլոյի դը-պրոցին՝ գոյներու շարքին մէջ, ինչպէս դեղինի և վարդա-գոյնի ստէպ գործածութիւնը մեղմ աս-տիճաններով . Փառլէթթի՝ իր ուսուցիչն ալ այդպէս էր, բայց աւելի դասական ուղղութեամբ :

Շատ քիչ անգամներ, շեղելով իր ծով-ափներէն, նկարած է նաեւ տաք երկիր-ներու ժողովրդական կեանքէն, ԹՈՒՂՈՒՆԻ ՎԱՃԱՌԱՆՈՅԸ, ՆԻՍԻ ԶԿՆԱՐԱՆԸ և այլ բնակարաններ, որոնց մէջ գոյներու այն-պիսի եռուզեռ մը կայ, որ կեանքին հետ կը մրցի, բնականութիւնը ներկերու բարդ ի բարդ դէզին տակ կարծես կը ջանայ իրականութենէն գերազանցել :

Աղամեանի նկարները, ընդհանուր գծով, ըլլայ բոցավառ լոյսի տակ, ըլլայ և մեղմ

շողերու մէջ, նախ իսոր ազդեցութիւն մը կ'ընեն, հուսկ հաճելի մոգութեամբ կը լեցնեն զիտողին հոգին . երբ մարդ բաժ-նուի անոնցմէ, քաղցը եւ բարեբար բան մը կը մնայ մէջը, անբաժան, անշօշափելի և իրական, որ չես գիտեր ինչ է և որ սակայն հոգեկան այնպիսի երջանկութիւն մը կու տայ որ կ'եղբայրանաս իրերուն, կ'ուզես փարլ աւազին, ջուրին ու քարին և սիրտդ բանալ գորովագութ բնութեան :

Առանց յարգելի պատկերահանին հա-մեստութիւնը վիրաւորելու՝ պէտք է խոս-տովանիլ որ Աղամեան միջազգային լա-ւագոյն նկարիչներէն է . մեր ազգին պար-ծանքն է օտարին առջեւ, հակառակ որ իրմով զրեթէ չենք զբաղիր : Նա հոգւով

սրտով կապուած է այս փոքր և տառապած ցեղին՝ ինքն ալ տառապանքի զաւակ ըլ-լալով . կը հետաքրքրուի իր ազգով, կը խօսի իր դաստիարակութենէն ստացած անթերի հայերէնը, քառասուն տարիներ օտարութեան մէջ մնալով հանդերձ, եւ այն գրեթէ միշտ կղզիացած իր քաջուղ բնաւորութեամբ . կ'ապրի իր ծննդավայ-րին տիրանոյշ յիշատակներով, իր պատա-նեկութիւնն օրօրող վեհեական կեանքով :

Վաթսունեամէկ տարիներու յոգնութե-նէն վերջն ալ նա խանդ, կորով ու թուխ մագեր ունի, նաեւ մանկական սիրտ մը որ պէթովէնեան երաժշտութեամբ (զոր շատ կը սիրէ) կը թրթռայ բնութեան և լոյսի զարկերուն տակ :

Գ. ՍԻՆԱՆԵԱՆԻ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՏԱՐԻՆԵՐՈՎ, պարբերաբար լսուած է Սինանեաններու երաժշտական մասնաւոր ձիրքը, որով հին եւ նախանձելի աւան-դութիւն մը այդ ընտանիքը կը կապէր ազնուագոյն գեղարուեստի մը հետ : Պու-սական ամէն կարեւոր եւ բարձր շրջա-նակի հաւաքոյթ իր հանդէսին լաւագոյն մասը Սինանեան եղբայրներու դերը հա-մարած է : Ինչո՞ւ չըսենք նոյնը նաեւ թրքական և այլ ազգերու հանդէսներուն համար :

Սակայն ոչ մէկ անգամ Սինանեաննե-րէն կըցաւ հաւասար շրջանակէն զատուիլ, և եզական տաղանդով արժանանալ ջու-թականարի եւ երգահանի կրկնակ տիտ-ղոսներուն, որքան Փարիզի երաժշտանոցէն առաջին մրցանակով աւարտող այն կա-րող եւ համակրելի երիտասարդը, Պրն . Գէորգ Սինանեանը, որուն լուռ և խոհուն ներաշխարհը երաժշտական նոր և ուժեղ

արտադրութեամբ կը ներկայանայ միջազ-գային անուններուն մէջ :

Այժմ իսկական գեղարուեստն է որ կը խօսի, երոպական մտքով : Ոչ եւս չա-փածոյ քայլերգներ, ոչ եւս ազգային եր-գերու անպաճոյճ մշակութիւններ, որոնց-մով կը սնանէր նախապատերազմեան հայ երգահաններու մեծագոյն մասը :

Պրն . Գ. Սինանեան իր ջութակով ար-դէն մեծ անուն մը շինած է հայ և օտար շրջանակներու մէջ, և հազուագիւտօրէն կը փնտռուի լաւագոյն հանդէսներուն մէջ . ահա իր հեղինակութիւններն ալ կու գան լաւագոյն անուն մը եւս շինելու :

Վեց հատ են առ այժմ տպագրուած ներք, և ամէնքն ալ կը կրեն Tibaudի, Benedettiի պէս հեղինակաւոր անձնա-ւորութիւններու գնահատանքի ստորագրու-թիւնը :

Մշակուած նիւթերը եւրոպական են և



ԳԵՈՐԳ ՍԻՆԱՆԵԱՆ

ընդհանրապես դասական վիպերգներ (romances), պարերգներ եւ մեղեդիներ: Feuille d'Album, Impression, արդիական արուեստով շինուած մեղեդիական սքանչելի կտորներ են, դասական վիպերգի գոհարներ, անթերի դաշնաւորութիւնով, սակայն կը պակսի ջութակի Virtuositisme, որուն հակառակ Mouvement perpétuel կը լրացնէ այդ պակասը եւ կը լսես Tartiniի մը ստեղծագործութիւնը:

Allegro appassionatoի մէջ հեղինակը

ԾԱՆ. ԽՄԲ. — Այս առթիւ, մինչ խմբագրութիւնս ալ կ'ուրախակցի փայլուն ասպարէզին համար ուր կը յառաջէ Սինանեան գերդաստանի այս արուեստագէտ շառաւիղը եւ մեր նախկին սանը, պարտք կը զգայ նաեւ իր խորին շնորհակալութիւնը յայտնելու՝ վանքիս մատենադարանին նուիրած իր արժէքաւոր երաժշտական 6 կտոր գործերուն համար:

1. — Feuille d'Album	op. 18	prix net	13 f.
2. — Allegro Appassionato	19	„	10 „
3. — Mouvement perpétuel	20	„	15 „
4. — Impression	21	„	10 „
5. — Chant Elégiaque	22	„	13 „
6. — Habanera	23	„	13 „

Editions Féret. Marcotte, 22 Rue Beaurepaire — Paris

դասական Սինարով շարադրած է, գրուած մէկ ամանակով. դաշնաւորութիւնը նուազ յանդուգն քան երկու առաջինները, սա աւելի երգութիւն սահմանուած է քան նուագի:

Chant Elégiaqueը անորոշ խորհրդաւորութեամբ մը կը սկսի. ձայնատիճաններն յաճախ կը փոխուին եւ փոխանակ մեղեդիներու յատուկ միապաղաղ երգի մը, լսողին սրտէն կը բխեցնէ յորդ զգացումներու թախծոտ անուշութիւն մը:

Habaneraն բոլորովին տարբեր է միւսներէն թէ՛ ոճով եւ թէ՛ չափով. իր անուան լիովին արդարացումն է: Բնիկ հապաներէն կը շեղի այնու որ՝ մինչ անոնք ըուպացիներու յատուկ լալական երկար վերջաւորութիւն մ'ունին, Պրն. Սինանեան իր պարերգին աւելի զըւարթ շեշտ դրած է պահելով պարի զնացքը (rythme): Պէտք է խոստովանիլ որ Mouvement perpétuelի հետ, շատ վարպետ ձեռքերու կը կարօտի:

Ահա իրենց համառօտ գծերուն մէջ այդ վեց հեղինակութիւնները, որոնց հրատարակութեան ընդառաջ երթալով Ֆրանսական տպագրող մը՝ արդէն նախանձելի գնահատանք մը կ'ընէ այդ համեստ եւ տաղանդաւոր աշխատանքին. մենք կը մաղթենք որ Սինանեան գերդաստանի ազնիւ շառաւիղը, աւելի լայն շունչով, խորունկ հոգեբանութեամբ ստեղծագործութիւններ կատարէ, որոնց կը սպասէ եւ կը փափաքի Հայ ազգը:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՀՐԱՆԴ ՎԵՀԱԿՐՕՆ

(Հ. ԱԼԱՏԻՆ)

Հետեւեալ յօդուածը՝ որ գրական վերլուծում մ'է՝ պիտի հրատարակէինք ամիսներ առաջ, բայց կամքէ անկախ պատճառներով յապաղեցաւ. մինչ այդ ցաւ ի սիրտ լսեցինք որ մեր սիրելի բարեկամն եւ նախկին սանը Հրանդ Ալատին (Վեհակրօն ծածկանունով) իր մահկանացուն կնքեց (28 Հոկտ. 1933) Գահիրէի մէջ:

Մեր ազնիւ բարեկամին տարածամ մահուան առթիւ մեր անկեղծ ցաւի լաւագոյն արտայայտութիւնը ներկայ յօդուածին հրատարակութեամբ կ'ուզենք ընել՝ զննելով զայն իր շիրմին վրայ որպէս յարգանքի անթառամ պսակ:

Հանգուցեալը բնիկ Կ. Պոլսեցի՝ Մ. Ռափ. վարժարանի մեր նախկին սաներէն էր, ազգասէր հայ մը եւ սիրող եւ նուիրող մեր տոհմային գրականութեան: Իր սգալի մահէն հազիւ ամիս մ'առաջ մեզի ուղղած էր հետեւեալ նամակը՝ զոր սիրով կը հրատարակենք որպէս համեստ արտայայտութիւն իր անձի մասին, եւ կարեւոր տեղեկութիւններուն համար, որոնք իր ընտանեկան պարագաներուն ալ թանկագին յիշատակ մը պիտի ըլլան անշուշտ:

Հելեոպոլիս, 1 Հոկտ. 1933

Վերապատուեալ Հայր,

Խմբագրապետ «Բազմալէս» ամսագրի.

Այսօր ստացայ Ձեր պատուական քարտը եւ կը փութամ գոհացում տալ Ձեր փափաքին, ինձ համար այնքան փաղաքշական, այսօրուան թղթատարին յանձնելով «Նոր Լիթանիա» քերթուածներուս եւ «Երգեր Տանդէի Դժոխքէն» թարգմանութեանս միաջեպ մէկ հատորս որ մօտ ատենէն լոյս պիտի տեսնէ. Թէպէտ աւարտած՝ սակայն համառօտ ծանօթութեանց բաժինը դեռ մամլոյ տակ է: Ինչպէս պիտի տեսնէք սոյն հատորս ձեռքս եւ իմ պատուական ուսուցիչի Հ. Յովհ. Թորոսեանի, որին աշակերտեցի Մ. Ռափայէլեանի ԻԳ. դասարանով: Այդ շրջանին էր որ իր հսկողութեան ներքեւ եւ ինձ դասակից Միք. Ալեմշահի հետ թարգմանաբար տուինք «Վեստեան Կոյս»-ը որ նախ «Բազմալէս»-ի մէջ երեւնալէ յետոյ հրատարակուեցաւ նաեւ առանձին հատորով: Յառաջաբանին մէջ անունս յիշատակուած է Հրանդ Պէրպէրեան: Ընտանեկան ամէն նախին յորջորջումս եղած ըլլալով «Ալատին օղլու» այժմ այնպէս կը մականուանուիմ եւ զոր հայացուցած եմ՝ իբր գրական անուն՝ «Վեհակրօն»:

Ան միւս երկասիրութիւններս որոնց թուումը գտաք վէպիս կողքին կունակը, ձեռագիր վիճակի մէջ են. Բառարանի ձեռագիրէն նմոյշ մը կըցայ միացնել զրկած ծրարիս, կարենալ այդ գործին կարեւորութեան մասին գաղափար մը տալու համար...:

Հայ գրական այս ապերախտ ասպարէզին մէջ նոյնիսկ բարոյական գնահատանքի բացակայութիւնը շատերը մեկուսացուց, չըսելու համար՝ ուժացուց. հարկ է դատաւարտել ասոնք եւ հետեւորդները:

Անունն շնորհակալիքս յայտնելով Ձեր այն ազնիւ զգացումներուն համար որով ուզեցիք հետաքրքրուիլ երկասիրութեանս մէջ՝ որակով եւ թէ՛ քանակով, լիւրճնեցէք, Վեր. Հայր, խորին յարգանքներուս հաւաստիքը:

ՀՐԱՆԴ ՎԵՀԱԿՐՕՆ

Ողբացեալին ակնարկած երկասիրութիւններն են.

1. Քերթուածներ.
2. Երգեր Տանդէի Դժոխքէն (թրգմ.).
3. Նուիրական մեղքը (տոամ. անտիպ).
4. Նորիս Անդէհուր (տոամ. «Վերադարձիւր Աշխատանոց» վէպէն քաղուած. անտիպ).
5. Ասիական երեք սահմանադրութիւններ (Ռուս. Թրք. Պարսկ. համառօտ ակնարկ պատմական).
6. Բառարան Հայ-Ֆրանս. հոմանիշ եւ մեթոքիմաստ բայերու (Մօտ 10.000 բայեր՝ 1000 խմբաւորութիւնով. անտիպ).
7. Nécropole des Catafalques (pièces en 3 actes).

Ասոնցմէ թ. 1. «ՆՈՐ ԼԻԹԱՆԻԱ ՔԵՐԹՈՒԾՆԵՐԸ» եւ թ. 2ը արդէն լոյս տեսած են Գահիրէի «Արգոս» տպարանէն (1933) եւ ձօնուած Գեր. Հ. Յովհ. Վ. Թորոսեանի հետեւեալ ընծայականով՝ ուր ազնիւ եւ երախտագէտ սրտի մը զեղումը կը տեսնուի.

«206 ՅԱՐԳԱՆՔԻ ԱՆՈՐ ՈՐ՝ կեանքիս լոյսին ամբողջութիւնը լրացուց մտքի լոյսը ջամբելով. Երկեակ զոյգութեանս սոյն երախտայրիքը աշակերտական պարտականութեանս զոյգն ձօնը ըլլալ ուղղեալ մեծատաղանդ ուսուցիչիս Հայր Յովհ. Վ. Թորոսեանի՝ իր քահանայական յիմնադրական առիթով» (Գահիրէ 1933) ԽՄԲ.